ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, շ.4, Հեռ. 060900303 ,
info.metsamor@mta.gov.am

N **04350**
12 սեպտեմբեր 2025 թ.

«ՎԱԼ-ԿԱՐ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
Ֆ. ԳՈՒԼԱՄԻՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն/տիկին Գուլամիրյան

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2024 թվականի հուլիսի 23 հայտարարված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի բնակավայրերի փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/89 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 13, 16-17-րդ չափաբաժինների մասովընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ՎԱԼ-ԿԱՐ» ՍՊԸ-ն և 19.09.2024թ-ին Ձեզ հետ կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/89-3ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում, հետագայում, հատկացվել են ֆինանսական միջոցներ և 03.02.2025թ-ին կնքվել է ֆինանսական միջոցների հատկացման, օրացուցային գրաֆիկի և վճարման ժամանակացույցի հատկացման համաձայնագիր:

Տեղեկացնում ենք, որ Պայմանագով սահմանված շինարարական աշխատանքների կատարման ժամկետը 17-րդ չափաբաժնի մասով ավարտվել է, սակայն սահմանված աշխատանքները չեն կատարվել, միաժամանակ 05.09.2025 թվականին տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցող կազմակերպությունը գրությամբ հայտնել է, որ «Վալ-Կար» ՍՊԸ-ն չի իրականացրել որևէ աշխատանք:

Հաշվի առնելով վերոգրյալը, սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ Պայմանագիրը 2025 թվականի սեպտեմբերի 12-ից միակողմանի ամբողջապես լուծվել է:

Հիմք ընդունելով ներկայացված միակողմանի հաստատված տուժանքների 1.8 կետերով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. 26.09.2025թ.-ը ներառյալ, ապահովել տուժանքների, մասնավորապես՝ որակավորման ապահովման մասով՝ 1,717,606.06 (մեկ միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր վեց դրամ վեց տասնորդական լուսա) ՀՀ դրամի

չափով և պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 1,145,070.70 (մեկ միլիոն մեկ հարյուր քառասունհինգ հազար յոթանասուն դրամ յոթանասուն լումա) ՀՀ դրամիչափով:

Տեղեկացնում ենք նաև, որ վերոնշյալի կապակցությամբ Մեծամորի համայնքապետարանը դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Մեծամորի համայնքապետարանը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Ն. Հակոբյան +37498393676